ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍ ԳՅՈՒՂԻ Ն3ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌ. 093-21-70-21
էլ. փոստ noratus3@schools.am

N 14/22

03. մարտի 2022թ.

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետ
պր. Կ. Սարգսյանին

Մեծարգո մարզպետ

Հայտնում եմ, որ <<<< Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ>>-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի դրույթներով, 2022 թվականի մարտի 3-ին կայացած թիվ4 արտահերթ նիստում որոշում է ընդունել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Կից ներկայացվում է կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի 2022 թվականի մարտի 3-ի թիվ 4 արտահերթ նիստի որոշման պատճենը և տնօրենի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ

Հարգանքով՝

Խորհրդի նախագահ՝ Կարեն Զազյան

Գեղարքունիքի մարզպետարան
ԱՆԴՐԱՆԻՐ ԲԱԺԻՆ
03 03 2022
Մտից թիվ 0-2786-2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/արտահերթ/

2022 թվականի մարտի 3-ին կայացավ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ՝ նախագահությամբ խորհրդի նախագահ Կարեն Զազյանի , քարտուղարությամբ՝Թ. Կարապետյանի:

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 7-ը:

Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ադամյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին

/Զեկուցող՝ Կարեն Զազյան/

Ղեկավարվելով <<<<Հանրակրթության մասին>> << օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի, << Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N319-Ն որոշման N3 հավելվածի դրույթներով և հիմք ընդունելով << կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության/նշանակման/ կարգի>> պահանջները՝ խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. «<< Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022 թվականի մարտի 9-ից հայտարարել մրցույթ:
2. Հանձնարարել խորհրդի նախագահին՝ Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը՝ համաձայն ձևի, գրավոր ներկայացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմին:
3.Մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել www.azdarar.am կայքում՝ << կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N174-Ն որոշմամբ սահմանված կարգով և կրթության կառավարման պետական լիազորված մարմնի /այսուհետ՝ նաև նախարարություն/ պաշտոնական ինտերնետային կայքում, << Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում:
4. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ 2021 թվականի մարտի 9-ից մինչև մարտի 29-ը ներառյալ:
5.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի / ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամ Թ. Կարապետյանին:
6. Մրցույթն անցկացնել կազմակերպության շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2022 թվականի ապրիլի 12-ին, ժամը 14:00-ին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մարտի 9-ից:

Խորհրդի նախագահ (կամ նիստի նախագահող)՝ _____/Կ.Զազյան/

Նիստի քարտուղար՝ _____/Թ. Կարապետյան/

Մրցույթի հայտարարություն

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2022 թվականի մարտի 9-ից մինչև մարտի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 14:00-ին,

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար դիմել խորհրդի անդամ Թեհմինա Կարապետյանին

Հեռ. 041-09-54-00, էլ. հասցե noratus3@schools.am